




ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ

(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

11. ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ (Մարկ. Բ 1—13)

- Բ 1 Օրեր հետո, երբ նա դարձյալ Կափառնայում մտավ, լուր տարածվեց, թե տանն է:
- 2 Եվ շատեր հավաքվեցին, այնպես որ այլևս տեղ չմնաց, ոչ իսկ դռան առջև: Եվ նրանց քարոզում էր Աստուծո խոսքը:
- 3 Եվ եկան նրա մոտ՝ բերելով մի անդամալուծի, որին տանում էին չորս հոգով:
- 4 Եվ երբ ամբոխի պատճառով նրան չկարողացան մոտենալ, քանդեցին երդիկը այն տան, որտեղ գտնվում էր Հիսուս. և բացելով առաստաղը՝ իջեցրին այն մահիճը, որի մեջ պառկած էր անդամալուծը:
- 5 Եվ Հիսուս, տեսնելով նրանց հավատը, անդամալուծին ասաց. «Որդյա՛կ, քո մեղքերը քեզ ներված են»:
- 6 Դպիրներից մի քանիսը, որ նստած էին այնտեղ, իրենց մտքում խորհում էին.
- 7 «Այս ի՞նչ է խոսում, սա հայիտյում է. ո՞վ կարող է մեղքերին թողություն տալ, եթե ոչ՝ միայն Աստված»:
- 8 Եվ Հիսուս իր հոգում իմացավ, որ այնպես են խորհում իրենց մտքում. ուստի

ասաց. «Ինչո՞ւ ձեր մտքում այդ եք խորհում.

- 9 Ո՞րն է ավելի դյուրին. անդամալուծին ասել՝ քո մեղքերը քեզ ներված են, թե՛ ասել՝ վե՛ր կաց, ա՛ն մահիճդ և գնա՛ քո տունը:
- 10 Բայց որպեսզի իմանաք, որ մարդու Որդին երկրի վրա իշխանություն ունի ներելու մեղքերը»,—ասաց անդամալուծին.
- 11 «Քե՛զ եմ ասում, վե՛ր կաց, ա՛ն քո մահիճը և գնա՛ քո տունը»:
- 12 Եվ նա վեր՝ կացավ ու անմիջապես վերցնելով մահիճը՝ բոլորի առաջ դուրս ելավ, այնպես որ ամենքը զարմացան և փառք էին տալիս Աստծուն ու ասում. «Այսպիսի բան երբեք չենք տեսել»:
- 13 Եվ նա դարձյալ ծովեզերք գնաց. և ամբողջ ժողովուրդը նրա մոտ էր գալիս, և նա ուսուցանում էր նրանց:

Վերադառնալով Կափառնայում, որտեղ նա անկասկած եկել էր հնարավորին չափ գաղտնի, Հիսուսին չի հաջողվում աննկատ մնալ: Նրա նախորդ այցելությունը այդ գյուղաքաղաքը՝ շատ հետքեր էր թողել: Եվ ահա շուտով ամեն կողմից գրոհում են նրա վրա:

Ավետարանիչը հաճույքով է դիտել տալիս, որ Հիսուս ամբողջովին բանտարկված է: Նա գտնվում է ժողովրդի բազմությամբ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № Բ-ից:

լցված մի տան մեջ: Ամբոխը խռնվել է դռան առջև ու փակել այն. դա փողոցի ելքին գտնվող ձկնորսական մի տնակի միակ մուտքն է: Բազմությունը օղակել է Հիսուսին: Նա չի կարող դուրս գալ այնտեղից, և ոչ ոք չի կարող մուտք գործել այնտեղ:

Անդամալույծի և նրան տանող մարդկանց համարձակ վճռականությունն է, որ փոխում է կացությունը: Չկարողանալով ամբոխի մեջ ճանապարհ բաց անել՝ նրանք մի անցք են բացում տան մեջ: Ծառի բարակ ճյուղերով և չորացած ցեխով դիպված մի հարթ տանիքի առաստաղը ձեղքելն այնքան էլ դժվար գործ չէր: Անդամալույծը կարողանում է հաղթահարել արգելքները, որոնք նրան բաժնում էին Հիսուսից:

Այդ պահից սկսած՝ պատենշներն ընկնում են մեկը մյուսի ետևից. անդամալույծը նախ փրկվում է իր մեղքերից, ապա՝ իր հիվանդությունից: Սկսվում նա պառկած էր մահճի մեջ, որով տանում էին նրան: Շուտով նա ոտքի է կանգնում և ինքն է տանում իր մահիճը: Ամբոխը ետ է քաշվում և ճանապարհի տալիս, որ նա դուրս գա: Իր հերթին Հիսուսն էլ կարողանում է դուրս ելնել, հասնել մինչև ծովափ, որտեղ հորիզոնն ավելի լայն էր, և ուսուցանել այնպիսի ապատություն, որ նրանից խել էր չափից դուրս անկուշտ ժողովուրդը: Կափառնալուսի անդամալույծի պատմությունը պատմությունն է կրկնակի ապատագրության:

Ովքե՛ր են դերակատարները այս եղելության: Նրանք բաժանվում են երկու խմբի. Կան այնպիսիներ, որոնց կարելի է կոչել ապատության թշնամիներ. նախ՝ **ամբոխը**, որը Հիսուսին պահում է ներսում, իսկ անդամալույծին՝ դրսում, և արգելում նրանց հանդիպումը. իր անհագ եռասիրությամբ նա փակում է ապատ տարածությունը: Այդ ամբոխը հիշեցնում է այն քրիստոնյաներին, որոնք, հանգիստ նստած իրենց եկեղեցում, պահեցնում են ամբողջ տարածությունը և խափանում Քրիստոսի խոսքը: **Դպիրները** նույնպես իրենց ներկայությամբ նպաստում են Հիսուսի շուրջը մարդկային օղակի ստեղծմանը: Նրանք՝ կրոնի այդ մասնագետները, խարսխված իրենց համոզմունքների մեջ, ներողության, Աստուծո, Հիսուսի մասին ունեն իրենց քարացած, հաստատուն գաղափարները, որոնցում սովորականից դուրս որևէ բան տեղ չունի բնավ: Հանձինս նրանց՝ արդեն սկսում է ուրվագծվել Հիսուսի ապագա հակառակորդների խումբը: Հստակ երևում է, որ ամբոխի և դպիրների վարմունքը նկարագրելիս Մարկոսը մտածում է քրիստոնեական համայնքի այն անդամների մասին, որոնց նա ուղղում է իր

խոսքը, և որոնք, իրենց վերաբերմունքով, արգելք են հանդիսանում, որ կենսունակությամբ տարածվի Բարի լուրը:

Մյուս խմբի դերակատարներն են Հիսուսն ու անդամալույծը, որոնք, ընդհակառակն, ծառայում են ապատությանը. նրանցից լուրաքանչյուրը դարբնում է մյուսի ապատագրությունը: Անդամալույծը հասարակությունից դուրս թողնված մի խեղճ մարդ է, որի վատահոլությունն ու վճռականությունը բերված են որպես օրինակ: Նա պատճառ է դառնում, որ Հիսուսի խոսքը դուրս գա ունկընդիրների սահմանափակ մի շրջանակից: **Հիսուս** ինքը հանդես է գալիս որպես մեկը, որն ի վիճակի է ապատագրելու մարդուն վատթարագույն գերությունից՝ մեղքից: Հիվանդության վրա ունեցած նրա իշխանությունը դրա ապացույցն է: Չմոռանանք, որ Հիսուսի ժամանակակիցներն ընդհանրապես այն պատկերացումն ունեին, որ հիվանդությունն ու մեղք իրար կապված բաներ են (այս մտայնությունը շատ տարածված դեռևս 20-րդ դարում). մարդիկ տանջվում են որպես պատիժ իրենց գործած մեղքերի:

Հիսուսի անձնավորությունն այնպես, ինչպես երևում է այս դրվագում, ուշագրավ է իր հակադրությամբ. նա միաժամանակ լի է թե՛ ուժով և թե՛ տկարությամբ: Նրա ուժը ի հայտ է գալիս մեղքերը ներելու իր կարողության մեջ: Դա եզակի մի առանձնաշնորհում է, որ դպիրները դիտել են տալիս, թե միայն Աստծուն է պատկանում: Սակայն միևնույն ժամանակ Հիսուս բանտարկյալն է գրոհող մի ամբոխի և կարիք ունի մի խեղճ եղբոր օգնությանը՝ դուրս գալու համար այդ դրությունից:

Այս պարադոքսային կացությունը ամփոփված է մի արտահայտության մեջ, որ Հիսուս գործածում է՝ մատնանշելու համար իր անձը. **Մարդու Որդի**: Այս արտահայտությանը առաջին անգամ ենք հանդիպում այստեղ, Մարկոսի ավետարանում, բայց Հիսուս հետագայում հաճախ է օգտագործելու այն: Այդ արտահայտությունը ինքնին բացատրում է Հիսուսի անձի ամբողջ առեղծվածը: Փոխ առնված լինելով Հին Կտակարանից և հրեական ավանդությունից՝ այն կարող է մատնանշել մարդկային էակը իր հնարավորության սահմանների և մեծության մեջ: Սաղմոսներից մեկը այդ մասին հետևյալն է ասում մի քանի շատ գեղեցիկ նախադասությունների մեջ.

«Երբ տեսնում եմ երկինքը՝ գործը քո

մատների,

Լուսինն ու աստղերը, որ հաստատեցիր դու, [խորհում եմ ես]՝ ո՞վ է մարդը, որ հիշում ես դու նրան,

Կամ մարդու որդին, որ խնամում ես նրան
Փոքր ինչ ցածր արեցիր նրան, քան
հրեշտակները քո,
Փառքով ու պատվով պսակեցիր դու նրան
Եվ կարգեցիր նրան քո բոլոր ձեռաց
գործերի վրա
Ու նրա ոտքերի տակ՝ ամենայն ինչ
հնազանդ դարձրիր»:
(Սաղմոս Ը 4—7)

Դանիելի գիրքը, որը գրված է Քրիստոսից
առաջ երկրորդ դարում, նույնպես ոգեկոչում
է կերպարը մի խորհրդավոր Մարդու Որ-
դու, որը բարձրանում է առ Աստված՝ տար-
ված երկնքի ամպերի վրայով.

«Գիշերային տեսիլքում տեսնում էի.
Ահա երկնքի ամպերի վրայով,
Իբրև մարդու որդի,
Նա գալիս հասնում էր Հավիտենականին:
Նա առաջնորդվեց նրա մոտ:
Նրան տրվեց իշխանություն, պատիվ և
արքայություն:
Բոլոր ժողովուրդները, ապգերն ու լեզուները
պիտի ծառայեն նրան,
Եվ նրա իշխանությունը պիտի լինի
իշխանություն հավերժական,
Որ վախճան չպիտի ունենա,
Իսկ նրա թագավորությունը չպիտի եղծվի»:
(Դանիել Է 13—14)

Հիսուսի մասին ասել, թե նա Մարդու Որ-
դի է, նշանակում է ասել, թե նրա անձը, որի
մեջ ուժ և տկարություն միացած են, ինչ-
պիսի հարցեր է առաջադրում: Դա նրա մա-
սին խոսելու ամենաբացահայտ եղանակն է:
Նրա խոսքերի ու գործերի վկաները, ինչ-
պես և Ավետարանի ընթերցողները, հրավիր-
վում են որոշելու իրենց դիրքը դրա շուրջ:

Եվ նրանցից յուրաքանչյուրը պետք է տա
իր սեփական պատասխանը:

12. ՀԻՍՈՒՍ ԵԿԵԼ Է ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ (Մարկ. Բ 14—17)

Բ 14 Եվ մինչ նա անցնում էր, տեսավ
Ալփեոսի որդի Ղևիին, որ մաքսատանը
նստած գործի վրա էր, ու նրան ասաց՝
արի՛ իմ ետևից: Եվ Ղևին վեր կացավ
գնաց նրա ետևից:

15 Եվ երբ Հիսուս նրա տանը սեղան նստեց,
բազում մաքսավորներ և մեղավորներ
էլ Հիսուսի ու նրա աշակերտների հետ
սեղան նստեցին, որովհետև շատերն
էին, որ նրա ետևից էին գնում:

16 Իսկ դպիրներն ու փարիսեցիները երբ
տեսան, որ նա մաքսավորների և մեղա-
վորների հետ է ուտում, նրա աշակերտ-

ներին ասացին. «Ինչո՞ւ է նա մեղա-
վորների և մաքսավորների հետ ուտում
և խմում»:

17 Երբ Հիսուս լսեց, նրանց ասաց. «Ա-
ռողջներին բժիշկ պետք չէ, այլ հի-
վանդներին. և ես չեմ եկել արդարներին
կանչելու, այլ՝ մեղավորներին»:

Հակառակությունը Հիսուսի նկատմամբ
որոշակի է դառնում: Նախորդ դրվագում
դպիրները բավարարվում էին իրենք իրենց
մեջ պախարակելով Հիսուսի վարմունքը:
Այստեղ նրանք իրենց անհամաձայնությունն
են արտահայտում նրա աշակերտներին:

Մյուս կողմից՝ Մարկոսը շարունակում է
բեմ դուրս բերել իր հորինած դրամայի դե-
րակատարներին: Երեք խմբի գործող ան-
ձինք, որոնք կարևոր դեր են խաղալու նրա
գրվածքում, հիշատակվում են առաջին ան-
գամ լինելով. մաքսավորները, փարիսեցիներ-
ը, աշակերտները:

Մաքսավորները այն հրեաներն էին, ո-
րոնք պարտականություն ունեին ժողովրդից
հավաքելու հոռմեացիների համար նախա-
տեսված հարկերը: Բազմաթիվ բառեր են
անհրաժեշտ՝ արտահայտելու համար այդ
պաշտոնի բազմազան կողմերը. հարկահա-
վաք, մաքսատան ծառայող, գործակից, օգ-
նական, մաքսավորը մի քիչ այս բոլորն էր
միաժամանակ: Նա նաև համարվում էր ան-
խիղճ մի մարդ՝ հավաքված հարկերի գու-
մարը հաճախ ենթակա լինելով նվաճողի հո-
վանավորությունը վայելող այդ «փոքրիկ
դեկավարի» քմահաճույթին: Դպիրները չէին
վարանում նույն տոպրակի մեջ լցնել մաք-
սավորներին և մեղավորներին, որոնք բո-
լորն էլ մոտիկ հարաբերություն մշակելու
համար անբաժան մարդիկ էին Օրենքը հար-
գող հրեայի աչքին:

Փարիսեցիները Քրիստոսի ժամանակա-
շրջանի հոգևոր և կրոնական մեծ շարժում-
ներից մեկի ներկայացուցիչներն էին: Որ-
պես խելացի և գործունյա մտավորականներ,
նրանց մտահոգությունն էր մեկնաբանել
Աստվածաշունչը ժամանակակից աշխարհի
կյանքի պայմաններին համապատասխան:
Նրանց շնորհիվ է, որ հրեական կրոնը մը-
նաց կենդանի և հզոր Երուսաղեմի անկու-
մից հետո, մեր թվագրության 70 թվականին:
Իրադարձությունների բերումով Հիսուս պի-
տի պախարակել նրանց ինքնահաճություն-
ը, նրանց հրահանգների խստությունը, կամ
այն եղանակը, որով նրանք շուռ էին տալիս
Օրենքը հոգուտ իրենց. Բայց գաղափարնե-
րով նա շատ մոտ էր նրանց:

Գալով «աշակերտներ» արտահայտությա-
նը՝ Մարկոսի ավետարանի հետագա ամբողջ

ընթացքն է, որ թույլ պիտի տա մեզ այդ բառին տալու առանձին մի բովանդակություն: Ընթերցողն արդեն ծանոթ է Սիմոնին, Անդրեասին, Հակոբոսին և Հովհաննեսին: Գրվածքը հասկացնել է տալիս, որ կան նաև ուրիշներ, որոնց անունները չեն տրվել: Ահա այժմ Ալփինոսի որդի Ղևին, որը միաժամանակ և՛ աշակերտ է, և՛ մաքսավոր: Հիսուսի կողմից նրա կանչվելու եղանակը շատ նման է առաջին չորս աշակերտների կանչվելու եղանակին (Տե՛ս Մարկ. Ա 16—20):

Հիսուս քննադատվում է, որովհետև սեղան է նստել ոչ հանձնարարելի մարդկանց հետ: Դա անկասկած տոնական մի ճաշկերույթ է, երբ մարդիկ ճաշում են մարմնով երկարած, հոռմեական ձևով: Պարզ չէ, թե որտեղ է տեղի ունենում այս դեպքը՝ Ղևի՞ տանը, թե՞ Հիսուսի: Թե՛ մեկը և թե՛ մյուսը հնարավոր է: Հիսուս դիպուկ պատասխան է տալիս՝ համեմատելով իրեն մի բժշկի հետ, որի վրա հույս են դրել հիվանդները:

Նա ոչ ոքի դուրս չի թողնում: Նա ասում է. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ՝ մեղավորներին»: Նա մարդկանց չի բաժանում դասերի: Նա կարող է լինել ինչպես փարիսեցիների, այնպես էլ բոլոր մարդկանց հույսը, պայմանով, որ նրանք ևս ընդունեն իրենց մեղավոր լինելը:

13. ՓԵՍԱՆ (Մարկ. Բ 18—22)

Բ 18 Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիները պատի մեջ էին. եկան և նրան ասացին. «Ինչո՞ւ Հովհաննեսի աշակերտները և փարիսեցիները պառ են պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»:

19 Եվ Հիսուս ասաց նրանց. «Միթե կարելի՞ է, որ հարսանքավորները պառ պահեն, երբ փեսան նրանց հետ է. այնքան ժամանակ, որ փեսան իրենց հետ է, պետք չէ, որ պառ պահեն:

20 Բայց կգան օրեր, երբ փեսան նրանցից կառնվի, և ապա այն օրը պառ կպահեն:

21 Նոր, չօգտագործված կտավի կտորը ոչ ոք հնացած զգեստի վրա չի կարի, ապա թե ոչ նոր կտորը ամբողջությամբ հին զգեստից կպոկվի, և պատռվածքը ավելի վատ կլինի:

22 Եվ ոչ ոք հին տիկերի մեջ նոր գինի չի դնի, ապա թե ոչ նոր գինին կպայթեցնի տիկերը, գինին կթափվի, և տիկերը կփչանան: Այլ նո՛ր գինին նո՛ր տիկերի մեջ պետք է դրվի»:

Սա երրորդ դրվագն է, որտեղ Հիսուս մե-

ղադրանքի տակ է առնվում: Հովհաննեսի և փարիսեցիների աշակերտները ցավ են հայտնում այն ակնհայտ անփութության համար, որ նկատվում է Հիսուսի առաջնորդության ներքև գտնվող խմբակի կյանքում. ոչ մի խստություն նրանց կենցաղում, ապաշխարանքի ոչ մի նշան, մինչդեռ իրենք ավելիով են գործադրում այդ բաները: Եվ դա այն դեպքում, երբ Հիսուս եղել է Հովհաննես Սկրտչի մոտ, և թվում է, թե բավականին մոտ է կանգնած փարիսեցիների հոսանքին: Ուրեմն ինչո՞ւ այդքան քիչ խստակրոնություն յուրայինների մոտ:

Հիսուս պատասխան է տալիս՝ ակնարկելով ինչ-որ ամուսնության, որի հիշատակումը բոլորովին անսպասելի է: Նա խոսում է մի փեսայի մասին, որ թվում է, թե հենց ինքն է, ինչպես նաև տեղի ունեցող հարսանեկան խնջույքի մասին:

Հին Կտակարանում մարգարեները Բարսելի հետ Աստուծո ղաշինքը ներկայացրել են նշանախոսության պատկերով: Եսային նույնպես նկարագրել է մի փառահեղ խնջույք, որ ապագայում Տերը պիտի տար Երուսաղեմում հավաքված երկրի բոլոր ժողովուրդներին անվախճան մի տոնախմբության համար:

«Եվ Ձորությունների Տերը, այս լեռան վրա, Բոլոր ժողովուրդների համար խնջույք պիտի պատրաստի, Որ ուրախանան և գինի խմեն»:

(Եսայի ԻԵ 6)

Հիսուս ինքն էլ է գործածում այդ նույն պատկերները: Քանի որ ժամանակը հասել է իր լուսմին, Եսայու կողմից կանխանշված խնջույքն սկսվել է. դա հարսանեկան մի կոչունք է, որի փեսան ինքը Քրիստոսն է, իսկ այն կապմանկերպողը՝ Աստված: Աստուծո Թագավորությունը հայտնի է դառնում այդ Թագավորությունը հայտնողի ամուսնությամբ այն մարդկանց հետ, որոնց հայտնված է այն: Պողոս առաքյալը համանման խոսքերով գրում է կորնթացիներին.

«Ձեզ նշանեցի մի մարդու՝ որպես մի սուրբ կույս ներկայացնելու համար Քրիստոսին»:

(Բ Կորնթ. ԺԱ 2)

Իսկ Մարկոսից մի քանի տարի հետո սուրբ Մատթեոս ավետարանիչը Հիսուսի բերանով պատմում է մի առակ, որ այսպես է սկսվում.

«Երկնքի արքայությունը նման է մի թագավորի, որ իր որդու համար հարսանիք արեց»:

(Մաթ. ԻԲ 2)

Այսպիսի շրջանակում Հիսուսի աշակերտները նման են երիտասարդ փեսայի ընկերներին, մի տեսակ պատվո երիտասարդներ, որոնք մոտիկից մասնակից են լինում պակադրությանը և մասամբ պատասխանատու են խրախճանքի կազմակերպմանն ու հարսանեկան ուրախ մթնոլորտի պահպանմանը: Ժամանակը չէ նրանց համար կախերես երևալու: Հետագայում նրանք առիթ կունենան տխրելու, երբ որ տոնախմբությունը դադարի...

Այն երկու համեմատությունները (զգեստի և գինու տիկերի), որոնցով ավարտվում է այս պատմությունը, հրավիրում են ունկընդիրներին լինելու միատարր: Հիսուս ո՛չ հինը և ո՛չ էլ նորն է արժեքավորում, այլ միատարրությունը: Հովհաննես Մկրտիչը և փարիսեցիները կարողացել են անցյալում քարոզել խստակրոնություն: Սակայն, Աստուծո թագավորության հայտնությամբ, հաստատվում է մի նոր կացություն, որ պահանջում է նոր վերաբերմունք:

14. ՇԱԲԱԹ ՕՐՎԱ ՏԵՐԸ (Մարկ. Բ 23—28)

- Բ 23 Մի շաբաթ օրով նա անցնում էր ցորենի արտերի միջով: Նրա աշակերտները գնալու ժամանակ սկսեցին հասկ պոկել և ուտել:
- 24 Եվ փարիսեցիները ասացին նրան. «Տե՛ս, քո աշակերտները շաբաթ օրով ի՛նչ են անում, մի բան, որ օրինավոր չէ»:
- 25 Հիսուս ասաց նրանց. «Դուք երբեք չէ՛ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ կարիք ունեցավ և քաղց զգաց, ինքը և նրանք, որ իր հետ էին:
- 26 Ինչպես Աբիաթար քահանայապետի օրով մտավ Աստուծո տունը և կերավ առաջավորության հացը՝ տալով նաև նրանց, որ իր հետ էին. մի բան, որ, բացի քահանաներից, ուրիշների համար օրինավոր չէր ուտել»:
- 27 Եվ ասաց նրանց. «Շաբաթ օրը մարդո՛ւ համար է, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար.
- 28 Ապա ուրեմն՝ մարդու Որդին տեր է և շաբաթ օրվան»:

Սննդին վերաբերող հարցերը, որոշապես, մեծ տեղ են գրավում Հիսուսին ուղղված մեղադրանքների մեջ: Նրան մեղադրում էին, որ սեղան է նստում մեղավորների հետ, որ իր աշակերտներին չի մղում ծոմապահության, իսկ այժմ ուկում են, որ նրանց

արգելի հասկեր պոկել, որովհետև օրը շաբաթ է: Փարիսեցիները իրե՛նք են մեջ մղում: Նրանք մասնագետներ են հրեական Օրենքի մեկնաբանության: Արդարև, նրանց համար հասկաքաղ անելը մաս է կազմում հնձին, իսկ հնձելն էլ մեկն է այն երեսունինը աշխատանքներից, որ արգելվում է անել շաբաթ օրով: Աշակերտները, հետևաբար, հանցավոր են, և Հիսուս է՛լ նրանց հետ, որովհետև թույլատրում է նրանց անել այդ:

Հիսուս կոչվում է նրանց դեմ իրենց իսկ զենքով՝ Աստվածաշնչով: Նրանք առաջ են քաշում շաբաթ օրով հասկեր քաղելու արգելքը: Արդ՝ Սուրբ Գիրքն ինքը ցույց է տալիս, որ, երբ մարդ քաղցած է լինում, սնվելու համար կարող է վանց անել կրոնական որոշ պատվիրաններ: Օրենքը ի սպաս է դրվում կյանքին և ոչ թե՛ հակառակը:

Հիսուս Դավթի կյանքից մեջ է բերում մի դրվագ, որին ծանոթ պետք է լինեին փարիսեցիները: Դավիթը, որ դեռևս երիտասարդ մի սպա էր Սավուղ թագավորի մոտ ծառայության մեջ. ստիպված եղավ փախչել՝ խուսափելու համար թագավորի չարությունից. Սավուղն ուկում էր սպանել նրան: Դավիթը Հուդայի լեռներում գտնվող Նոբի սլորաբարանը՝ Դավիթը, որ սաստիկ տանջվում էր քաղցից, տաճարի պատասխանատու քահանային պատմեց մի ստահող փոքրիկ պատմություն, որպեսզի վերջինս օգնի իրեն: Նա ասաց, որ ինքը թագավորի կողմից է առաքվել, որ իրեն հանձնվել է հրամանատարությունը պինդորակա մի ջոկատի (մինչդեռ նա մենակ էր), որ իր պինդորները կանգ են առել մի քիչ հեռվում, և որ նրանք բոլորը քաղցած են: Այն ժամանակ քահանայապետը նրան տվեց իր ձեռքի տակ եղած միակ ուտելիքը, որ պաշտամունքի համար սահմանված հացեր էին և որ սովորաբար քահանաները միայն իրավունք ունեին ուտելու (տես Ա Թագ., գլուխ ԻԱ 2—7):

Այն եղանակը, որով Հիսուս մեջ է բերում այս պատմությունը, հետաքրքրական է: Նոբի քահանայապետը կոչվում էր Ահիմելեք, իսկ Հիսուս նրան կոչում է Աբիաթար: Նա սխալվում է: Ինչ վերաբերում է Դավթի հետ պատահած եղելությանը, Հիսուս այն նկարագրում է ըստ այն ստահող պատմության, որ Դավիթն արել էր քահանայապետին, և ոչ այնպես, ինչպես եղել էր իրականում (Դավիթը մենակ էր և փախստական):

Փարիսեցիները, սակայն, ոչ մի պատասխան չեն տալիս: Հիսուսի փաստարկման մեջ ուշագրավն այն է, որ Դավիթը առաջնային համարեց կյանքին ծառայելը, քան պաշտամունքին վերաբերող մի օրենք հարգելը: Այդ է եղել, ըստ Հիսուսի, Արարչի

մտադրությունը, որն ավանդված է Սուրբ Գրոց մեջ: Ահա թե ինչու, այդ տրամաբանությանը, նա կարող էր ասել:

«Շաբաթ օրը մարդո՛ւ համար է, և ոչ թե մարդը՝ շաբաթ օրվա համար»:

Այսուհանդերձ, մինչև այստեղ արտակարգ ոչինչ չկա: Հիսուս վարվում է ինչպես մի վարդապետ, որը բանավիճում է ուրիշների հետ Սուրբ Գիրքը մեկնաբանելու եղանակի շուրջ: Բոլոր ժամանակներում հրեա ռաբբիները իրենց միջև ունեցել են և կունենան նման վեճեր. քրիստոնյա աստվածաբանները՝ նույնպես:

Հիսուս մի քայլ առաջ է անցնում այն դեպքում, երբ, որպես եկրակացություն, հետևյալ հաստատումն է անում. «Մարդու Որդին տեր է և շաբաթ օրվան»: Այստեղ նա իրեն վերագրում է մի առանձնաշնորհում, որ նրա ժամանակակիցները վերապահում էին Աստծուն, ճիշտ այնպես, ինչպես որոշ ժամանակ առաջ նա հայտնել էր անդամալուծին, որ նրա մեղքերը ներված են: Այստեղ ևս Հիսուս իրեն ներկայացնում է նույն երկդիմի արտահայտությամբ՝ Մարդու Որդի (տես վերը Մարկ. Բ 1—13):

Այս դեպքերը հիշատակելով՝ Մարկոսը ի հայտ է բերում Հիսուսի առաքելության կենտրոնական կողմերից մեկը. նա եկել է փրկելու մարդուն իր բոլոր գերություններից՝ մեղքի գերությունից, սխալ հասկացված և դրանով իսկ մարդու հոգին չորացնող կրոնական օրենքի գերությունից և այլն:

Իրոք որ դա մի Բարի լուր է բոլոր նրանց համար, որոնք ձգտում են ձմարիտ ազատության:

15. ՆԱ, ՈՎ ՊԻՏԻ ՄԵՌՆԻ (Մարկ. Գ 1—6)

- Գ 1 Նա նորից ժողովարան մտավ. այնտեղ կար մի մարդ, որի ձեռքը չորացած էր:
- 2 Եվ նրան ուշադրությամբ դիտում էին՝ տեսնելու, թե շաբաթ օրով նրան կբժշկի՞, որպեսզի մեղադրեն նրան:
- 3 Եվ նա ասաց այն մարդուն, որի ձեռքը չորացած էր. «Վե՛ր կաց, մեջտե՛ղ արի»:
- 4 Ապա ասաց նրանց. «Շաբաթ օրով ի՞նչ բան օրինավոր է անել. բարի գո՞րծ գործել, թե՛ չարիք անել. մի հոգի՞ ազատել, թե՛ կորստյան մատնել»: Եվ նրանք լռեցին:
- 5 Հիսուս, ցատկմով լցված, նայելով նրանց և տրամելով նրանց սրտի կուրության համար, ասաց մարդուն. «Երկարի՛ր ձեռքը»: Եվ նա երկարեց, ու նրա ձեռքը առողջացավ:

6 Փարիսեցիները հերովդեսականների հետ իսկույն դուրս ելան և խորհուրդ էին անում, թե ինչպես նրան կորստյան մատնեն:

Այս դեպքից հետո Հիսուսի բախտը վճռված էր: Փարիսեցիների խումբը կատարել էր իր ընտրությունը: Նրանցից ոմանք գնացին գտնելու հերովդեսականներին, որոնք անկասկած հրեա թագավոր Հերովդես Անտիպասի բարեկամներն ու նրա ձեռքի խաղալիքն էին: Գալիլիայի այս թագավորը, որ հռոմեական իշխանության հսկողությանը ենթակա մարդ էր, բավականաչափ իրավունք ուներ՝ կարողանալ մահապատժի ենթարկելու համար նեղություն պատճառող անձանց: Նա է, որ հետագայում գլխատել պիտի տար Հովհաննես Մկրտչին: Արդ, այնպիսի մի մարդ, ինչպիսին Հիսուսն էր, կարող էր անկարգություն ստեղծել և խախտել առանց այդ էլ անկայուն հավատարակչությունը հրեական և հռոմեական իշխանությունների միջև: Հայտարարված լինելով անբաղձալի անձ՝ Հիսուս այժմվանից համարվում է դատապարտման ենթակա մարդ:

Նախորդ եղելությունները թշնամիներ են երևան բերել: Նա գտնվում է ամենախիստ հսկողության տակ: Այժմ գաղտնի հետևում են նրան՝ հանցանքի մեջ բռնելու համար: Շաբաթ օրվա մասին նրա արած աղմկահարույց հայտարարություններից հետո կրկնապատկվում է աջալրջությունը: Շատ վարմանալի կլինեք, եթե նա նորից մի որևէ հանցանք թույլ չտար Օրենքի նկատմամբ:

Արդարև, այնտեղ, ժողովարանում մի հիվանդ մարդ կա: Նրա կապակցությամբ Հիսուսի և իր հակառակորդների միջև հակադրությունը գնալով հստականում և սրվում է: Հիսուս նրան կանգնեցնում է ներկաների մեջտեղում, որպեսզի նրա մարմնական պակասությունը ցույց տա, թե որչափ մեծ է վեճի մեջ դրված խաղաղումարը: Այստեղ ևս, ինչպես պոկված հասկերի դրվագում, հարց է առաջանում, թե շաբաթ օրը և հրեական Օրենքի մյուս պահանջները արդյոք պետք է ի սպաս դրվեն կյանքին: Հիսուս հստակորեն կատարում է դա, և գործը խուճին միացնելով՝ բժշկում է հիվանդին:

Վերջում խլումը կատարյալ է լինում: Հիսուս իր հակառակորդների նկատմամբ վայրույթ և տխրություն է վզում միայն: Իսկ նրանք հեռանում են այդտեղից՝ ոճրածին ծրագրեր որոճալով իրենց մտքում:

Մարկոսի ավետարանի այս մասում, երբ հասնում ենք մի կետի, որտեղից այլևս վերադարձի ոչ մի հեռանկար չկա, հետաքրք-

քիր կլինեն մի պահ անդրադառնալ տեղի ունեցած այն հինգ դրվագներին, որոնք առաջ բերեցին վերջնական խզումը, սկսած Կափառնայումի անդամալուծի բժշկումից: Այդ դրվագները դասավորվում են ըստ այն պատկերի, որն ընթացիկ է Մարկոսի ավետարանում ու դասական՝ սեմական գրվածքներում, և որը կոչվում է «ներմուծում» կամ «ներփակում»: Այսպես՝ առաջին և վերջին դրվագները համապատասխանում են իրար, նաև՝ երկրորդ և չորրորդ դրվագները, այնպես որ դրանցից պատվում է երրորդ դրվագը, որը գտնվում է կենտրոնական դիրքում:

Ա. Մարդու Որդին (Բ 1—13)

տրտունքներ և բժշկում:

Բ. Հիսուս եկել է մեղավորների համար (Բ 14—17)

վեճ. ո՞ւմ հետ ուտել:

Գ. Փեսան (Բ 18—22)

վեճ. պա՞ս պահել, թե՞ խնջույքի նըստել:

Բ.¹ Շաբաթ օրվա տեղը (Բ 23—28)

վեճ. ուտե՞լ, երբ մարդ քաղցած է:

Ա.¹ Նա, ով պիտի մեռնի (Գ 1—6)

տրտունքներ և բժշկում:

Այս շղթայի մեջ ի հայտ է գալիս աճող մի հակառակություն Հիսուսի դեմ, սկսած հայհոյանքի մեղադրանքից մինչև գաղտնի դավադրություն՝ նրան սպանելու միտումով: Այս պատկերը արժևորում է նաև կենտրոնական դրվագը (Գ), որտեղ Հիսուս հանդես է գալիս որպես փեսա, իսկ նրա քարոզությունը՝ որպես տոնական մի ժամանակաշրջան: Հիսուսի հակառակորդները՝ փարիսեցիները և մուսնները, այն մարդիկ են, ովքեր ձայնողեցնելու են տոնախմբությունը, որ Աստված պատրաստել է մարդկության համար: Ցանկանալով այդ տոնախմբությունից դուրս թողնել աղքատներին և մեղավորներին՝ նրանք ամենից առաջ իրենք իրենց են դուրս թողել:

16. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՒՄ (Մարկ. Գ 7—12)

Գ 7 Իսկ Հիսուս իր աշակերտների հետ գնաց ծովեզերք: Եվ Գալիլայից բազում ժողովուրդ էր գնում նրա ետևից, նաև Հրեաստանից:

8 Երուսաղեմից, Հորդանանի մյուս կողմից, ինչպես նաև Տյուրոսի և Սիդոնի շրջակայքից բազում ժողովուրդ, երբ լսում էր, թե նա ինչքան բան է անում, գալիս էր նրա մոտ:

9 Եվ նա իր աշակերտներին ասաց, որ իր համար մի նավակ պատրաստ լինի ամ-

բոխի պատճառով, որպեսզի իրեն չնեղեն:

10 Քանի որ շատերին էր բժշկել, ուստի ամեն տեսակ հիվանդություններ ունեցող մարդիկ գալիս խռնվում էին նրա շուրջը, որպեսզի դիպչեն նրան:

11 Եվ պիղծ ոգիները, երբ տեսնում էին նրան, ընկնում էին նրա առաջ, աղաղակում էին ու ասում. «Դու ես Աստուծո Որդին»:

12 Իսկ նա խստիվ պատվիրում էր նրանց, որ իրեն հայտնի չդարձնեն:

Իր պատմության ընթացքում Մարկոսը ժամանակ առ ժամանակ պարզաբանում է կացությունը: Նա որոշակի դեպքեր հիշատակելուց հետո, մի քանի նախադասությամբ նշում է, թե ինչպիսին են հարաբերությունները Հիսուսի և նրա շրջապատի միջև: Այդ կարգի մի պատկեր, ընդհանուր գծերի մեջ, առաջին անգամ տրվել էր Սիմոնի պոքանչի բժշկումից հետո (Մարկ. Ա 32—34). Հիսուս այն ժամանակ իսկական մի հաջողություն էր ունեցել: Այժմ, երբ բազում բանավեճերի հետևանքով երևան են եկել համառ հակառակորդներ, մթնոլորտը շատ է վատթարացել: Մարդիկ անընդհատ վազում են Հիսուսին ընդառաջ. հիացումը ծայրահեղ աստիճանի է հասել. ամբոխի խելահեղ վազքը նման է հարձակման:

Ավետարանիչը նույնիսկ չի ասում, թե արդյոք հիվանդները բժշկվե՞լ են, կամ դիվահարներից դեները հանվե՞լ են: Հիսուս, որ ամեն կողմից պաշարված է և անկուշտ ամբոխի կողմից հրմշտուքի ենթարկված, ամենից առաջ ստիպված է դիմել պաշտպանության: Նա խստիվ հանդիմանում է դեերին, որպեսզի լռեցնի նրանց, և իր աշակերտների օգնությամբ աջխառնում է իրեն հեռու պահել իր վրա հարձակվող բազմությունից: Փոքրիկ նավակը, որի մեջ նա նստում է, մի ապաստարան է նրա համար:

Տիմար խուժանը, որը Հիսուսի առաքելությունից ոչինչ չի հասկանում, հիբրավի արժանի է նրա հակառակորդների շարքը դասվելու: Նրա հակառակությունը նվազ պատճառաբանված է, քան փարիսեցիներինը, բայց և նույնքան իրական է: Գալով բոլոր կողմերից՝ Հրեաստանի գավառներից և հեթանոսական շրջաններից (Հորդանանի մյուս ափից, Տյուրոսից, Սիդոնից), այդ խառնակ ամբոխը Հիսուսի մեջ տեսնում է միայն հրաշքներ գործող մարդուն, որից ուզում է օգուտ քաղել: Նրա վերաբերմունքը փակում է նրա առաջ Բարի լուրը:

Մարկոսի պատմությունը ինչքան առաջ է գնում, այնքան հասունանում է դրաման:

կրոնավորների ընտրանին որոշում է գործի դնել իր ոճրային ծրագիրը: Ժողովրդի զանգվածը մտքով այնքան սահմանափակ է, որ հանդես է գալիս որպես թշնամի: Այդ բոլոր մարդիկ աստիճանաբար կապմուն են Հիսուսին մեթոդների ձևերով: Շուտով Հիսուսի շուրջը մտնում է միայն մի փոքրաթիվ խմբակ, որ ընդունակ է մասնակից լինելու ավետարանական արկածախնդրությանը: Նրանք մի բուռ մարդիկ են:

Մարկոսը նրանց կոչում է «աշակերտներ»:

17. ՏԱՄՆԵՐԿՈՒ ՍՌԱՔՎԱԾՆԵՐԸ

(Մարկ. 9 13—19)

- 9 13 Հիսուս լեռը բարձրացավ և իր մոտ կանչեց նրանց, որոնց ինքը կամեցավ. և նրանք գնացին նրա մոտ:
- 14 Նա նշանակեց Տասներկուսին, որպեսզի իր շուրջը լինեն, և նրանց ուղարկի քարոզելու,
- 15 ու նրանք իշխանություն ունենան ցավեր բուժելու և դևեր հանելու:
- 16 Նա Սիմոնի անունը Պետրոս դրեց.
- 17 Ձեբեդեոսի որդու՝ Հակոբի ու նրա եղբոր՝ Հովհաննեսի անունները դրեց Բաներեզես, որ նշանակում է՝ Որոտման Որդիներ:
- 18 Նաև՝ Անդրեասին, Փիլիպպոսին, Բարթոլոմեոսին, մաքսավոր Մաթեոսին, Թովմասին, Ալփեոսի որդի Հակոբոսին, Թադևոսին, Սիմոն Կանանացուն
- 19 և Հուդա Իսկարիոթացուն, որը և մատնեց նրան:

Մարկոսի ավետարանում գործողության վայրերը տիպավորված են. ծովափը այն տեղն է, որտեղ Հիսուս հանդիպում է ամբոխին: Տունը կամ ժողովարանը սովորաբար այն վայրն է, որտեղ Հիսուս ընդհարվում է իր հակառակորդների հետ: Լեռը մտերմիկ հարաբերությունների և վստահության վայրն է. Հիսուս այնտեղ է առանձնանում իր մտերիմների հետ: Ի տես փարիսեցիների թշնամանքի և տխմար ամբոխի կոպտության, հարկավոր է, որ նա գիտենա, թե ո՛ւմ հոգին դեռևս բաց է՝ ընդունելու Բարի լուրը, և ո՛ւմ վրա նա կարող է հույս դնել, թե մասնակից կդառնա դրան:

Տասներկուսը, որոնց նա նշանակում է, կոչվում են «առաքյալներ», այսինքն՝ «ուղարկվածներ», «առաքվածներ»: Նրանց թիվը համապատասխանում է Իսրայելի տասներկու ցեղերի թվին, այն ընտրյալ ժողովրդի, որին, Աբրահամից սկսած, հանձնարարվել էր Աստծուն ձանաչել տալ աշ-

խարհին: Առաջին չորս կանչվածները՝ Սիմոնը, Անդրեասը, Հակոբոսը և Հովհաննեսը, մաս են կապմուն խմբին:

Նրանցից շատերը նոր անուններ են ստանում, և դա նշանակությունից զուրկ չէ, որովհետև, սենական մտայնությամբ, անունը մարդու անձը բնորոշող մի բան է. ծանոթ լինել մեկի անվանը՝ նշանակում է գրեթե մի կոչում տալ նրան:

Այդ անուններից մի քանիսը պահանջում են հակիրճ բացատրություններ.

—Սիմոնը դառնում է Պետրոս, որ համարժեքն է ֆրանսերեն «Pierre»¹ անվան: Բառախաղը հնարավոր է նաև հունարենում (ավետարանների լեզուն), որտեղ պետրոս բառը նշանակում է «վեմ, ժայռ»: Արամերեն լեզվում, որով արտահայտվում էին Հիսուս և նրա շրջապատի մարդիկ, քար բառի համար գործածվում էր քեֆա. հենց այդ անունն է, որ Սիմոնը ուղղակիորեն ստացել է Հիսուսից. Պետրոս անունը դրա թարգմանությունն է միայն: Նոր Կտակարանում Պետրոս անվան փոխարեն երբեմն հանդիպում ենք Քեֆա անունին:

Հակոբոսի և Հովհաննեսի համար ավետարանիչը տալիս է այն անունը, որ նրանք ուղղակիորեն ստացել են արամերենում՝ Բաներեզես, սակայն նա տալիս է նաև դրա նշանակությունը՝ Որոտման Որդիներ:

—Երկրորդ Սիմոնը նույնպես նշվել է իր մականունով՝ Կանանացի, որը անհասկանալի մի բառ է ինչպես հունարենում, այնպես էլ ֆրանսերենում: Այդ մականունը Հիսուսի կողմից չի տրվել նրան, այլ գործածվել է նրան զանազանելու համար մյուս Սիմոնից, որը անվանացանկի սկզբում է. դա մի քիչ նման է երկու Հակոբոսների անուններին, որոնք իրարից զանազանվում են իրենց հայրանուններով՝ Ալփեոս և Ձեբեդեոս: «Կանանացի» բառը չի նշանակում Կանանի բնակիչ. դա պատճենումն է արամերեն մի բառի, որ նշանակում է «նախանձառույց»: Երբեմն ոմանք ենթադրել են, որ այս երկրորդ Սիմոնը պատկանելիս է եղել այն նախանձախնդիր մարդկանց խմբին, որոնք հռոմեական գրավման շրջանում հանդես էին գալիս որպես մոլեռանդ դիմադրողներ: Սակայն ավելի հավանական է, որ նրա նախանձառույցությունը նրա խառնվածքի մեկ հատկանիշը լինի. ըստ երևույթին նա եռուն բնավորություն ունեցող մեկն է եղել, ճիշտ ինչպես սուրբ Պողոսը, որը չի վարանում իրեն կոչել «նախանձախնդիր»:

—Հուդայի համար գործածված Իսկարիոթ-

¹ Pierre բառը ֆրանսերենում նշանակում է թե՛ Պետրոս և թե՛ քար:

տացի մականունը, որը նույնպես անհասկանալի է հունարենում, գուցե վերաբերում է Քրիստոս կոչվող նրա հայրենի գյուղին կամ նրա խարդախ ու խաբեբա նկարագրին: Քրիստոսեական ողջ ավանդության մեջ նա զերպանացապես համարվել է այն մարդը, «որը նրան մատնեց»:

Տասներկու առաքյալների անվանացանկը Մարկոսի համար մի առիթ է հիշեցնելու, որ Հիսուսի չարչարանքները ուրվագծվում են հորիզոնում:

18. ՅՈՒՐԱՅԻՆՆԵՐԻ ՄԻԶԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ (Մարկ. Գ 20—21)

Գ 20 Նրանք տուն վերադարձան. և ժողովուրդը նորից եկավ նրանց հետ, այնպես որ նրանք հաց ուտելու անգամ ժամանակ չունեցան:

21 Եվ երբ Հիսուսի յուրայիները լսեցին, ելան եկան նրան բռնելու, որովհետև կարծում էին, թե խելքը կորցրել է:

«Նորից եկավ», գրում է Մարկոսը: Հիւրավի, առաջին անգամ չէ, որ Հիսուս պաշարված է լինում ամբոխի կողմից: Այն օրը, երբ նա բժշկեց իր մահիճի մեջ երկարած մի անդամալուծի, կացությունը մոտավորապես նույնն էր (Մարկ. Բ 1—13). Հիսուս գտնվում էր տանը, դուռ գալու բոլոր անցքերը փակված էին խուռներամ բալամությունից, և դրաի հետ հաղորդակցվելու ոչ մի հնարավորություն չկար: Այս անգամ, սակայն, կացությունը շատ ավելի ծանր է: Հիսուս ոչ միայն արգելափակված է, այլև նույնիսկ հնարավորություն չունի նվազագույն չափով սնունդ ընդունելու: Ամբոխի ծայրահեղ կապվածությունը մարդուս կյանքին սպառնացող ինչ-որ բան ունի իր մեջ. Հիսուս վտանգի տակ է:

Հենց այդպես էլ հասկանում են նրա ընտանիքի անդամները: Գործելով այնպես, ինչպես պիտի անեն մյուս բոլոր ընտանիքների անդամները իրենց փոխարեն, նրանք գալիս են դուռ բերելու համար նրան այդ տեղից: Միայն թե նրանք վստահ չեն, թե որևէ ձևով հնարավոր կլինի այդ: Նախ մտածում են, որ նա խելքը կորցրել է կամ առնվազն գործում է անգիտակից կերպով. այնուհետև մտադրվում են դիմել կտրուկ միջոցի՝ խելու համար նրան հարձակվող ամբոխի ձեռքից: Կափառնայումսի անդամալուծի և նրան տանող չորս մարդկանց միջամտության մեջ ավելի մեծ հարգանք կար յուրաքանչյուրի ապատության նկատմամբ:

Իր գործածած բառերով ավետարանիչը հասկացնել է տալիս, որ Հիսուսի ընտանիքը

միայն ու միայն բարի մտադրություններ չունեն: Բայց զարմանալիորեն նա չի ասում այստեղ, թե նրա ընտանիքի այս քայլը որևէ բանի հանգում է: Մի այլ միջամտություն, նվազ բարեմիտ, քան այս մեկը, դեռ տեղի պիտի ունենա նախքան այս եղերության ավարտը (տես հետևյալ երկու հատվածները. Մարկ. Գ 22—30 և Գ 31—35):

19. ՀԻՍՈՒՍ ԵՎ ՍԱՏԱՆԱՅԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Գ 22—30)

Գ 22 Իսկ Երուսաղեմից իջած դպիրները ասում էին, թե դրա մեջ Բեեղզբեղզ կա, և դևերի իշխանի ձեռքով է հանում դևերին:

23 Եվ նա իր մոտ կանչելով նրանց՝ առակներով էր խոսում նրանց հետ. «Ինչպես կարող է սատանան սատանային դուրս հանել:

24 Եվ արդ, եթե մի թագավորություն ինքն իր մեջ բաժանվի, այդ թագավորությունը չի կարող կանգուն մնալ:

25 Եվ եթե մի տուն ինքն իր մեջ բաժանվի, այդ տունը չի կարող կանգուն մնալ:

26 Եվ եթե սատանան ինքն իր դեմ դուրս գա և բաժանված լինի, չի կարող կանգուն մնալ, այլ նրա վախճանը հասած է:

27 Ոչ ոք չի կարող հյորի տունը մտնելով՝ նրա ունեցածը կողոպտել, եթե նախ չկապտի հյորին. և ապա միայն կըկողոպտի նրա տունը:

28 Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ մարդկանց որդիներին, որքան էլ հայիոյեն, ամեն մեղք և հայիոյանք կներվի.

29 բայց ով որ հայիոյի Սուրբ Հոգուն, հավիտյան թողություն չի ունենա, այլ նա հանցապարտ է հավիտենական մեղքով:

30 Այսպես խոսեց նա, որովհետև ասում էին՝ նրա մեջ պիղծ դև կա:

Բեեղզբեղզ. սատանայի բազմաթիվ անվանումներից մեկն է սա, որը ծագում է ասորական աստվածներից մեկի՝ Բաադի անունից: Բեեղզբեղզ նշանակում է «Բաադ իշխան»: Հրեաները ծաղրալից արհամարհանքով երբեմն այդ բառը աղավաղում և ասում էին «Բաադզբեղզ» կամ «Բեղզբեղզ», որ նշանակում է «ճանձերի Բաադ»:

Երուսաղեմից իջած դպիրները չեն ուրանում այն փաստը, որ Հիսուս հրաշքներ է գործում կամ դևեր հանում: Նրանք մերժում են միայն այն պորությունը, որի անունով գործում է նա. ըստ նրանց, Հիսուս սատանայի գործակալ է: Այս մեղադրանքը բեր-

ված է հենց հատվածի սկզբում (համար 22). այն վերստին գործածված է հատվածի վերջում որպես եկրակացություն, և այսպիսով ամբողջ վեճը ներմուծված է միմյանց շատ մոտ իմաստ արտահայտող երկու նախադասությունների միջև:

Հիսուս պատասխանում է առակների ձևով: «Ետաքորքրական է նշել, որ «առակ» բառը, որն առաջին անգամ է հանդես գալիս այստեղ Մարկոսի գրչի տակ, ցույց է տալիս Հիսուսի հակառակորդների համար սահմանված մի ուսմունք: Դրանք սովորական փորձառությունից քաղված շատ կարճ նշանաբներ են, որոնք Հիսուսի խոսակցիցներին հասկացնել են տալիս, որ իրենց մեղադրանքը անհիմն է. մի թագավորություն և մի ընտանիք չեն կարող տնել, եթե քայքայված են ներքին երկպառակություններով (համար 24 և 25). հետևաբար սատանան՝ դևերի իշխանը, հաճուքով չէ, որ պիտի պայքարի իր օգնականների դեմ (համար 26):

Այնուհետև բերված է մի ուրիշ առակ՝ հյոր մարդու առակը (համար 27): Սա մի քիչ ավելի դժվար է հասկանալ, որովհետև Հիսուս չի բացատրում այն: Հյոր մարդը, անտարակույս, սատանան է, որի տունը քարոքանդ է անում Հիսուս: Եթե հնարավոր է լինում այդ ավերները պատճառել, նշանակում է սատանան արդեն կապտված է եղել իրենից ավելի ուժեղ մեկի կողմից: Նրա հպորությունը նվազել է: Նա չի կարող Հիսուսի կատարած հրաշքների սկզբնաղբյուրը լինել:

Հիսուս իրեն մեղադրող դպիրներին նշանավոր դարձած մի ապդարարություն է անում «Սուրբ Հոգու դեմ ուղղված հայհոյանք»-ի մասին. դա այնպիսի մի մեղք է, որի համար հնարավոր ոչ մի ներում չկա: Քրիստոնեական ավանդությունը երկար է խորհրդածել այդ աններելի մեղքի բնույթի մասին, իսկ ընթերցողն էլ միշտ նեղվել է այդ նախապգուշացման խստությունից: Կա՞ն արդյոք այնպիսի հանցանքներ, որ Աստված իր անսահման բարության մեջ մերժի ներել:

Ո՛չ: Աստված չէ, որ մերժում է: Դպիրների կողմից արված մեղադրանքները մեկ թույլ են տալիս հասկանալ, թե ինչու նրանք ի վիճակի չեն ներում ստանալու: Նրանք վկա են Հիսուսի գործերին, գործեր, որ նա կատարում է Սուրբ Հոգու պորությամբ. մկրտության և փորձության տեսարանում ավետարանիչը հստակորեն նշել է, որ Աստուծո Հոգին գործում էր Հիսուսի մեջ (Մարկոս Ա 9—13): Արդ, մեղքերի ներումը ևս, ստուգապես, մեկն է Հիսուսի գործերից (Մարկոս Բ. 5), որ նա կատարում է

Հոգու պորությամբ: Դա հենց այն է, որի մասին հայտնում էր Հովհաննես Մկրտիչը. «Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով» (Մարկոս Ա 8): Ինչպե՞ս մեկը կկարողանա ստանալ այդ ներումը, եթե նա Հոգու ներգործությունը նույնացնում է սատանայի գործի հետ: Ասել, որ Հիսուս գործում է դևի պորությամբ՝ նշանակում է իր անձը փակել այն ներման առաջ, որը գալիս է Հիսուսի մեջ ներկա եղող և գործող Սուրբ Հոգուց:

Ինչո՞ւ է կայանում, ուրեմն, այն նշանավոր հայհոյանքը, որի համար հնարավոր ոչ մի ներում չկա: Դժվար թե կարելի լինի հստակորեն նկարագրել այն կամ կապել հանցանքների մի ցուցակ, որը համապատասխանի դրան: Դա, ավելի շուտ, ամբողջական մի կեցվածք է, որի ցայտուն արտահայտությունն է դպիրների կեցվածքը, որը սխտեմատիկ կերպով չարն է տեսնում այնտեղ, որտեղ բարին է գտնվում: Նա, ով ոչ մի կերպ թույլ չի տալիս, որ բարին հասնի իրեն, այդպիսի մեկի հոգին չի կարող բաց լինել ներման առաջ, որը Աստուծո կողմից մեզ տրված ամենամեծ պարգևն է:

Երուսաղեմից եկած դպիրներին ուղղված Հիսուսի խոսքերով Մարկոսն իր ընթերցողներին պոռնացնում է այն ապականված հայացքից, որն ամեն ինչ արատավորում է և մարդու հոգին՝ անթուժելիորեն փակում բարու և գեղեցիկի առջև:

Դա մի ապդարարություն է, որը վերաբերում է ինչպես քրիստոնյաներին, այնպես էլ Եկեղեցու թշնամիներին և բոլոր մարդկանց:

20. ՀԻՍՈՒՍԻ ՃՇՄԱՐԻՏ ԸՆՏԱՆԻՔԸ (Մարկ. Գ 31—35)

Գ 31 Եկան նրա եղբայրներն ու մայրը և դրսում կանգնած՝ մարդ ուղարկեցին ու կանչեցին նրան:

32 Եվ այնտեղ ժողովուրդը նստել էր նրա շուրջը: Եվ երբ առաջին նրան՝ ահա՛վասիկ քո մայրն ու եղբայրները դուրսում են և քեզ են ուզում,

33 նրանց պատասխանեց և ասաց. «Ո՛վ է իմ մայրը կամ՝ իմ եղբայրները»:

34 Ապա նայեց իր շուրջը, իր աշակերտների վրա, որոնք նստած էին, և ասաց. «Ահա՛վասիկ իմ մայրը և իմ եղբայրները»:

35 որովհետև ով Աստուծո կամքն է կատարում, նա՛ է իմ եղբայրը և քույրը և մայրը»:

Հիսուսի մայրը և եղբայրները այժմ գալիս են այն տունը, որտեղ նա գտնվում է: Մարկոսը մի քիչ առաջ պատմեց, թե ինչպես

նրանք շարժվեցին եկան «բռնելու նրան» և խլելու ամբոխի ձեռքից: Հիսուսի ազգականների այս երկու միջամտությունները համապատասխանում են իրար և առանձնանում Բեռլիգերուդի մասին տեղի ունեցած վեճից, սակայն ամբողջը կառուցված է ըստ այն պատկերի, որը սովորական է Մարկոսի մոտ (եես վերևում Մարկ. Գ 1—6-ի կապակցությամբ բերված պատկերը):

Ա. Ազգականների միջամտությունը (Գ 20—21)

Բ. Հիսուս մեղադրվում է դիվահար լինելու մեջ (Գ 22)

Գ. Հիսուսի պատասխանները (Գ 23—29)

Բ¹. Հիսուս մեղադրվում է դիվահար լինելու մեջ (Գ 30)

Ա¹. Հիսուսի ճշմարիտ ազգականները (Գ 31—35)

Հիսուսի ընտանիքը, յուրայիններից մեկին բռնելու համար իր արած միջամտությամբ, իրոք որ ներկայանում է որպես «ինքն իր մեջ բաժանված մի տուն», որի մասին Մարկոսը խոսեց սատանայի վերաբերյալ Հիսուսի և դպիրների միջև տեղի ունեցած վեճի ժամանակ (Մարկ. Գ 25): Այդ ընտանիքը ինքն իրեն դատապարտում է կործանման: Նրա ոչ լրիվ դրական կեցվածքով է բացատրվում Հիսուսի պատասխանը, որն ավելի շուտ մի սառը պատասխան է (չասելու համար խիստ) իր մոր և եղբայրների նկատմամբ:

Ավետարանի ընթերցողները հաճախ նեղվում են Հիսուսի պատասխանների խստությունից՝ ուղղված իր մորը: Բացի այդ, նրանք այս դեպքում պզուռ են մի ուրիշ տեսակի նեղություն. այն, որ խոսք է լինում Հիսուսի եղբայրների և քույրերի մասին, մինչդեռ քրիստոնեական ավանդությունը նրան ներկայացնում է որպես միածին որդի: Այս դժվար հարցին ընդհանրապես պատասխանում են՝ դիտել տալով, որ սեմական աշխարհում «եղբայր» բառը դյուրությամբ գործ է ածվել նաև զարմիկի կամ մերձավոր ազգականի համար: Համենայն դեպս սրանք այնպիսի հարցեր են, որոնք Մարկոսին չեն պահեցնում: Նրան քիչ են հետաքրքրում, թե ովքեր են այդ եղբայրներն ու քույրերը: Ոչ էլ նրան մտահոգում է Մարիամի նկատմամբ բարեպաշտ և ակնածալից պաշտումներ տածելու հարցը: Նրա գրվածքում էականը Հիսուսի և նրա շրջապատի միջև գոյություն ունեցող որոշակի հարաբերությունն է. մի կողմից՝ արյունակից ազգականներ, մյուս կողմից՝ Աստուծո խոսքի ունկնդիրներ:

Հիսուս ներսում է. նրա չորս բուրդը, շուրջանակի, նստել է մարդկանց մի բազմություն: Մարկոսը չի ասում, թե նրանք ինչ են անում միասին: Արդյոք Հիսուս խոսում է նրանց հետ: Նրանք լսում են նրան: Հայտնապես ամբոխը իր մեջ է առել դպիրներին, որոնց հետ հենց քիչ առաջ Հիսուս վեճի մեջ էր մտել ոչ առանց ընդհարման, ինչպես նաև այն մարդկանց, որոնք նախապես թույլ չէին տալիս նրան նույնիսկ ուտել: Սակայն այժմ կացությունը ներսում թվում է ավելի հանգիստ: Հիսուս չի քաշվում իրեն շրջապատող մարդկանց համար ասել, որ նրանք իր մայրն ու եղբայրներն են, իր իսկական ընտանիքը: Մարկոսի համար նրանք, անկասկած, ներկայացնում են եկեղեցու որոշ մեկ պատկերը:

Հիսուսի մարմնավոր ընտանիքը, ընդհակառակն, մնում է դրսում: Նա չի խառնվում ներսում հավաքված բազմությանը: Հիսուսին կանչել է տալիս դոսից, կարծես թե նա պարտավոր լինեք հնազանդվելու: Նրա վերաբերմունքը մտածել է տալիս այն ընտանիքների վերաբերմունքի մասին, որոնք, հալածանքների շրջանում, ուզում էին համոզել իրենց քրիստոնյա անդամներին, որ չման եկեղեցում, քանի որ այն վտանգավոր էր դարձել: Մարկոսը քաջ ծանոթ է եղել այդ հարցերին, նա, որ իր երկը գրում էր Հռոմի քրիստոնյա համայնքի համար այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ թարմ էր Ներոնի հալածանքների հիշողությունը:

Հիսուս, սակայն, տեղի չի տալիս: Նրանք, ովքեր ուզում են բռնի ուժով կամ բարոյական իշխանությամբ տիրանալ նրան, սխալվում են: Թող նրանք մնան դրսում, քանզի ներսիներին մաս կարելի է կապմել միայն «Աստուծո կամքը կատարելով»: Մարկոսն ու մյուսները իրենք ևս կարող են մաս կապմել ներսիներին, բայց նրանք իրենք իրենց մեկուսացնում են վկայակոչելով իրենց մարմնավոր ազգակցությունը՝ Հիսուսին ետ պահելու համար իր առաքելությունից:

Մարկոսն արդեն մեզ հայտնել է փարիսեցիների թշնամանքի և նրանց ոճրային ծրագրերի, ապա նաև հրաշքների ծարավի բազմությունների հակառակության մասին: Այժմ նա հայտնում է Հիսուսի մարմնավոր ընտանիքի վերաբերմունքի մասին, ընտանիք, որը ցանկանում էր օգտվել իր ազգականության կապերից: Ի վերջո, ինչքան մեծանում է Բարի լուրից իրենք իրենց մեկուսացնող մարդկանց շրջանակը, այնքան փոքրանում է Հիսուսի ճշմարիտ աշակերտների խումբը:

(Շարունակելի)